# ԼՂԻՄ. ՇԱԲԱԹ ՇԱԲԱԹԻ ՀԵՏԵՎԻՑ

Անցած շաբաթ Լեռնային Ղարաբաղում ծայրաստիճան լարված դրություն էր տիրում. հաճախակի էին դարձել պրովոկացիոն գործողությունների դեպքերը, որոնք սրել էին ռեգիոնի առանց այն էլ բարդ իրադրությունը: Աղդամի շրջանի Շոբլանլի ադրբեջանական գյուղից մեծ թվով ամբոխ՝ հրազենով, մահակներով ու քարերով զինված, նոյեմբերի 23-ին հարձակվել էր Մարտակերտի շրջանի 22-րդ կուսհամագումարի անվան խորհտնտեսության չորս հայ աշխատողների վրա: Ելուզակները բռնի կերպով իրենց հետ տարել էին ինքնապաշտպանության դիմած երկու աշխատողների և վիրավորել երրորդին: Դրան ի պատասխան, շրջկենտրոնի մի խումբ բնակիչներ պատանդ են վերցրել Մարտակերտի շրջանի Մանիքլու գյուղից չորս ադրբեջանցիների: Դրանով մարդկանց առևանգումները չեն դադարել: Նույն օրը ուշ երեկոյան Մարտակերտի շրջանի Խաթրմբեյլի և Օրթափայա ադրբեջանական գյուղերի միջև ընկած տարածքում բռնել են երկու հայ վարորդների ու տարել հարևան Աղդամի շրջան: Երկու կողմերը միայն հաջորդ օրն են բաց թողել պատանդներին: Նույն օրը՝ նոյեմբերի 23-ին, Մարտակերտի շրջանում գնդակոծվել է մի ավտոմեքենա, որի հետևանքով վարորդը՝ Ռազմիկ Հարությունյանը կրծքավանդակի մասում վերք էր ստացել և տեղափոխվել է հիվանդանոց:

Այդ օրը, որը դժբախտաբար, առատ էր պատահարներով, Շուշիի շրջանում ադրբեջանցիները կանգնեցրել են յոթ ավտոմեքենաներից բաղկացած շարասյուն, որը Բերդաձոր հայկական գյուղից մասնավոր անասուններ էր տեղափոխում Ստեփանակերտի մսի կոմբինատ: Չնայած որ շարասյունը ուղեկցում էին զինծառայողներ, ամբոխը քարկոծել է մեքենաները, խլել անասուններն ու քշել-տարել Շուշիի շրջանային ագրոարդյունաբերական միավորում: Ընդ որում երկու գյուղացիների մարմնական վնասվածքներ են հասցրել:

Լարվածության սրման առիթ են ծառայել նաև Բաքվից և հանրապետության ուրիշ շրջաններից ստացված տագնապալի լուրերը, որտեղ հայ բնակչություն է ապրում: Այսպես, մենք արդեն քանիերորդ անգամ Ադրբեջանում ազգամիջյան իրավիճակի սրման վկաներն ենք դառնում, ինչը որպես կանոն ըստ ժամանակի համընկնում է Ղարաբաղի հարցի նախատեսվող քննարկման հետ: Մարդիկ արդարև հարց են տալիս. մինչև ե՞րբ պետք է հաշվի նստեն կենտրոնական իշխանությունների վրա գործադրվող ուժային ճնշման քաղաքականության հետ, որն ուղղակի սպառնում է հանրապետության հայ բնակչության կյանքին:

Մինչդեռ արցախցիները, որոնք դեռ անցյալ տարվա փետրվարին, հաղթահարելով շատ խոչընդոտներ, միանշանակ վճիռ կայացրին, շարունակում են սերտ կապեր հաստատել հայրենակիցների հետ: Հայկական ԽՍՀ ժողովրդատնտեսական համալիրի հետ մարզկենտրոնի ձեռնարկությունների և կազմակերպությունների ինտեգրացման հարցերը քննարկվեցին կուսակցության քաղաքային կոմիտեում տեղի ունեցած դիրեկտորների խորհրդի խորհրդակցությունում: Համապատասխան ինֆորմացիա տվեց Հայկոոպ արտադրական միավորման Ստեփանակերտի կաթի կոմբինատի դիրեկտոր Արմո Մատուրյանը: Ելույթ ունեցողները մասնավորապես այն միահամուռ կարծիքը հայտնեցին, որ անհրաժեշտ է էլ ավելի արագացնել ինտեգրացման տեմպերը: Խորհրդակցության մասնակիցները քննարկեցին նաև այն փոխօգնության միջոցառումները, որ շրջափակման պայմաններում կարող են իրար ցույց տալ քաղաքի աշխատավորական կոլեկտիվները: Որոշվեց դեկտեմբերի 2-ին անցկացնել համաքաղաքային շաբաթօրյակ, իսկ դեկտեմբերի 7-ը հայտարարել սգո օր՝ կապված մեկ տարի առաջ հայ ժողովրդին պատուհասած տարերային աղետի հետ:

Նոյեմբերի 24-ին Ստեփանակերտի երկաթուղային կայարան է հասել 45 վագոն՝ Տյումենում բեռնված հավաքովի տնակներով: Դրանք նախատեսված են Ասկերանի շրջանի շինարարների համար: Կիրակի օրը քաղաք ժամանեց ևս 17 վագոն՝ զանազան ժողովրդատնտեսական բեռներով:

**Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**
(Արմենպրեսի սեփ. թղթ.)

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ